



შეფასებისა და გამომცდების
ეროვნული ცენტრი

Ընդհանուր ունակությունների թեստ

Հրահանգ

Ձեր առջև քննական թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Թեստը բաղկացած է երկու՝ բանավոր և մաթեմատիկական մասերից:

Յուրաքանչյուր մասը պարունակում է 40 առաջադրանք: Ամեն մի առաջադրանքին կցված է չորս ենթադրական պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ:

Թեստի յուրաքանչյուր մասի վրա աշխատելու համար տրվում է 1 ժամ և 35 րոպե:

Ուշադրությամբ ընթերցեք յուրաքանչյուր առաջադրանքի հրահանգը, լավ ըմբռնեք, թե ինչ է պահանջվում առաջադրանքը կատարելիս, և այնուհետև ընտրեք պատասխանը:

Թեստի առավելագույն միավորն է 80:

Մաղթում ենք հաջողություն:



Բանավոր մաս

Համանմանություններ

Այս առաջադրանքներում տրված է մգացված տառատեսակով աչքի ընկնող երկու բառ (նախնական զույգ), որոնց իմաստի միջև գոյություն ունի որոշակի կապ: Դրանց երկայնքով տրված է բառ, որը ենթադրական պատասխաններից որևէ մի տարբերակին պետք է համապատասխանի այնպես, որ բառերի իմաստների միջև կապը նախնական զույգում գոյություն ունեցող կապին նման (համանման) լինի:

1. ճպտյալ : անանուն

ստանդարտային :

- (ա) տարրական
- (բ) նվազագույն
- (գ) առաջնային
- (դ) բարդ
- (ե) տիպիկ

2. ասպարեզ : մրցասպարեզ

հորիզոն :

- (ա) ոլորտ
- (բ) արեալ
- (գ) աշխարհ
- (դ) մակերես
- (ե) տեսադաշտ

3. ռենտգեն : ախտորոշում

պատրաստուկ :

- (ա) անտիֆիոտիկ
- (բ) դեղատոմս
- (գ) թերապիա
- (դ) օպերացիա
- (ե) ներարկում

4. աղյուսակ : վանդակ

ամսագիր :

- (ա) ինֆորմացիա
- (բ) խորագիր
- (գ) մամուլ
- (դ) տիրաժ
- (ե) բովանդակություն

5. լեռ : հրաբխային

վարակ :

- (ա) վարակիչ
- (բ) համաճարակային
- (գ) թունավոր
- (դ) վիրուսային
- (ե) վարակազերծ

6. հուզվում է : ալիք

մաղում է :

(ա) ամպ

(բ) մառախուղ

(գ) ջուր

(դ) հոսք

(ե) կաթիլ

Նախադասության լրացում

Տրված են նախադասություններ, որոնցում բաց է թողնված մի քանի բառ: Բաց թողնված բառերը նախադասության մեջ նշված են գծերով: Մեկ գիծը երբեմն համարվում է մեկ բառ, իսկ երբեմն՝ մի քանի:

Ենթադրական պատասխանների յուրաքանչյուր տարբերակը պարունակում է բառերի խումբ, որի մասերը միմյանցից բաժանված են շեղ (/) գծերով: Ընտրեք պատասխանի այն տարբերակը, որի յուրաքանչյուր մասը հերթականությամբ տեղադրելով համապատասխան բաց թողնված տեղերում կստացվի իմաստով ճիշտ նախադասություն:

7. Գրող Կ.Լուիսը իր գործընկերներին խորհուրդ էր տալիս. գրելիս մի կիրառեք չափից ավելի ----- ձևավորումներ: Մի ասեք ----- այնտեղ, որտեղ ----- , քանզի այդ դեպքում չեք գտնի համապատասխան բառը այն ժամանակ, երբ կցանկանաք խոսել ինչ-որ այնպիսի բանի մասին, ինչը ----- :

- (ա) կտրուկ / «չափազանց» / պարզապես ի նկատի ունեք «անսահման» / չեք համարում անսահման
- (բ) մեղմ / «չափազանց» / ուզում եք ասել «անսահման» / իսկապես անսահման է
- (գ) կտրուկ/«անսահման» / պարզապես ի նկատի ունեք «չափազանց» / իսկապես անսահման է
- (դ) մեղմ / «անսահման» / ուզում եք ասել «չափազանց» / չեք համարում անսահման

8. Մեր մտքերը հաճախ ուղղվում են այնտեղ, որտեղ ----- , – այ, մեր դժբախտությունների իսկական պատճառը: Ինչ կարճատեսություն է այնպիսի վաղանցիկ էակի համար, ինչպիսին մարդն է, միշտ ----- նայել, որը ----- , և ----- հավաստի ներկան:

- (ա) երբեք չենք լինի / դեպի հեռավոր ապագան / հազվադեպ թե իրականանա / արհամարհել
- (բ) երբևէ կլինենք / հեռավոր անցյալին / ինչ–որ ժամանակ իրականացավ / չարհամարել
- (գ) ինչ–որ ժամանակ եղել ենք / հեռավոր անցյալին / հազվադեպ թե իրականանա / արհամարհել
- (դ) երբեք չենք լինի / դեպի հեռավոր ապագան / ինչ–որ ժամանակ իրականացավ / չարհամարել

9. Անկարելի է ----- այս կարծիքը, ----- այնպիսի փաստեր, որոնք ----- դրա օրինաչափությունը և ----- ուրիշ, այլընտրական հայացքների ձևավորումը:

(ա) հերքել / քանզի դժվար թե գտնվեն / հաստատում են / օժանդակում են

(բ) չկիսել / չնայած այն բանին, որ կգտնվեն / հաստատում են / պայմանավորում են

(գ) չկիսել / չնայած այն բանին, որ մինչև օրս չեն հաստատվել / կասկածի տակ են դնում / անհնար են դարձնում

(դ) հերքել / քանզի մինչև օրս չեն հաստատվել / կասկածի տակ են դնում / պայմանավորում են

10. Բրիտանական հոգեբանական ընկերության վարքի օրենսգրքի համաձայն, ----- մատուցի տեղեկատվություն հետազոտության նպատակների մասին : ----- , նրան ----- ստել այն դեպքում, եթե հոգեբանական գործընթացի ուսումնասիրությունը ----- առանց հետազոտության ճշմարիտ նպատակները ----- :

- (ա) հետազոտողը, երբ էլ հնարավոր է, հետազոտության բոլոր մասնակիցներին պետք է / Թերևս / չի արգելվում / անհնար է / թաքցնելու
- (բ) հետազոտողը պարտավոր չէ հետազոտության բոլոր մասնակիցներին/ Համապատասխանաբար / արգելվում է / անհնար է / թաքցնելու
- (գ) հետազոտողը, երբ էլ հնարավոր է, հետազոտության բոլոր մասնակիցներին պետք է/ Համապատասխանաբար / արգելվում է / հնարավոր է միայն / բարձրաձայնելու
- (դ) հետազոտողը պարտավոր չէ հետազոտության բոլոր մասնակիցներին / Թերևս / չի արգելվում / հնարավոր է / հրապարակելու

Տրամաբանություն

Այսպիսի առաջադրանքները տարբերվում են միմյանցից նախնական տվյալների և կայացրած եզրակացությունների տեսակետից: Այդ պատճառով առանձնահատուկ ուշադրություն դարձրեք հարցին, որը կցված է յուրաքանչյուր առաջադրանքին և տրված տարբերակներից ընտրեք համապատասխան պատասխանը:

Որոշ հարցերի պատասխան տալը կհեշտանա, եթե տվյալները արտահայտեք գծագրի կամ դիագրամայի ձևով:

11. Աննան, Էկան, Դավիթը, Նիկոն, Թեան և Լևանը ընկերներ են: Ամեն մեկը տարբեր տարիքի է: Դրա հետ միասին հայտնի է.

- Աննան Թեայից ավագ է և Նիկոյից կրտսեր:
- Լևանը Նիկոյից ավագ է:
- Ամենակրտսերը տղա է, իսկ ամենաավագը՝ աղջիկ:

Երեխաներին խնդրեցին կանգնել մեկ շարանով տարիքը ավելանալու համաձայն (կրտսերից դեպի ավագ): Ստորև թվարկածներից որտե՞ղ է ներկայացված այս շարանը:

(ա) Լևան, Էկա, Թեա, Աննա, Նիկո, Դավիթ

(բ) Դավիթ, Թեա, Աննա, Լևան, Նիկո, Էկա

(գ) Լևան, Էկա, Թեա, Աննա, Դավիթ, Նիկո

(դ) Դավիթ, Թեա, Աննա, Նիկո, Լևան, Էկա

(ե) Թեա, Դավիթ, Աննա, Նիկո, Լևան, Էկա

12. Տրված են դրույթներ.

- Որոշ մարդիկ խելամիտ են:
- Բոլոր խելամիտ մարդիկ պահպանում են քաղաքավարության կանոնները:

Ստորև թվարկածներից ո՞ր դրույթն է անպայմանորեն սխալ, եթե տրված դրույթները ճշմարիտ են:

- (ա) Որոշ մարդիկ, ովքեր քաղաքավարության կանոնները պահպանում են, խելամիտ չեն:
- (բ) Որոշ մարդիկ, ովքեր քաղաքավարության կանոնները չեն պահպանում, խելամիտ չեն:
- (գ) Ոչ մի մարդ, ով քաղաքավարության կանոնները չի պահպանում, խելամիտ չէ:
- (դ) Որոշ մարդիկ, ովքեր քաղաքավարության կանոնները պահպանում են, խելամիտ են:
- (ե) Բոլոր մարդիկ, ովքեր պահպանում են քաղաքավարության կանոնները, խելամիտ չեն:

13. Քառակուսի հրապարակի անկյուններում չորս տարբեր շենք է կանգնած: Դրանցից մեկում տեղավորված է բանկ, մեկում՝ թատրոն, մեկում՝ սուպերմարկետ և մեկում՝ դեղատուն: Հայտնի է.

- Բանկի շենքը դեղատան շենքից ավելի ցածր է:
- Սուպերմարկետի շենքը թատրոնի շենքից ավելի բարձր է:
- Բանկը ամենացածր շենքի նկատմամբ տեղադրված է անկյունագծորեն:

Ստորև թվարկածներից ո՞րն է անպայմանորեն ճշմարիտ:

- (ա) Սուպերմարկետի շենքը դեղատան շենքից ավելի բարձր է:
- (բ) Սուպերմարկետի շենքը անկյունագծորեն է տեղադրված թատրոնի նկատմամբ:
- (գ) Սուպերմարկետի շենքը անկյունագծորեն է տեղադրված դեղատան նկատմամբ:
- (դ) Սուպերմարկետի շենքը բանկի շենքից ավելի բարձր է:
- (ե) Սուպերմարկետի շենքը ամենաբարձրն է:

14. Հայտնի է, որ չվող թռչունների մեծամասնությունը գիշերը թռչում է դեպի հարավի կողմ: Հիպոթեզներից մեկի համաձայն, դա բացատրվում է նրանով, որ գիշերը երկնքում անհամեմատ ավելի շատ են կողմնորոշիչ (նովիզացիոն) նշանները:

Ստորև թվարկածներից ո՞րն է կասկածի տակ դնում այս կարծիքը:

- (ա) Թռչունները գիշերը թռչելիս, որպես օրենք, կողմնորոշվում են աստղերի տեղադրությամբ:
- (բ) Մինչև չվելը թռչունները ցերեկ-գիշերվա ընթացքում անընդհատ սնվում են, որպեսզի պատրաստվեն գիշերը առանց կանգ առնելու թռչելուն:
- (գ) Գիշերը չվողների շրջանում գերազանցում են այն թռչունները, որոնք թռչելիս հեշտությամբ կողմնորոշվում են Երկնքում Լուսնի տեղադրությամբ:
- (դ) Տարածությունում կողմնորոշվելու համար թռչունները օգտվում են բևեռականության լույսից, հողի մագնիսական դաշտից և այլ ազդանշաններից, որոնց նկատել հնարավոր է ցանկացած ժամանակ:
- (ե) Ցերեկը չվող թռչունները, ի տարբերություն գիշերը չվող թռչուններից, ժամանակ առ ժամանակ հանգստանում են և, որպես օրենք, հանգստանալու համար ընտրում են սննդով հարուստ վայրեր:

Ընթերցած տեքստի վերախմաստավորում

Ուշադրությամբ ընթերցեք և վերախմաստավորեք տեքստը: Յուրաքանչյուր հարցի ենթադրական պատասխաններից ընտրեք այն տարբերակը, որը արդարացված է տվյալ տեքստի համաձայն:

Այս կամ այն հարցին ծանոթանալուց հետո, պատասխանելու համար հնարավոր է պահանջվի կրկին տեքստին վերադառնալ, համապատասխան հատվածը կրկին ընթերցել և նորից հարցին անցնել: Դա կհեշտացնեք ինչպես տեքստի, այնպես էլ յուրաքանչյուր հարցի վերջում տրված համապատասխան նշումները «սեղմելով»:

i Եթե Հարավային Ամերիկայի արևադարձային անտառում ճանապարհորդեր և փոքրիկ ճնճղուկի տարատեսակ մանակին տեսնեք, հնարավոր է դառնաք երաժշտական ներկայացման ականատես: Փոքրիկ մանակինը իր թևերով «երգում է»: Այս թռչունի քառասուն հայտնի տեսակներից մոտավորապես կեսը երաժշտություն է ստեղծում մարմնի շարժումներով: Էգերին հրապուրելու համար արուները զարմանալի մանևրներ են կատարում. արագորեն թռչում են, պտույտ են գործում, գլխիվայր են կանգնում, ետընթաց սահում են, (ինչը շատ նման է Մայքլ Ջեկսոնի «Լուսնի վրա զբոսանք» – moonwalk) պարի ոճին: Գիտնականները միայն հիմա են սկսում ուսումնասիրել, թե ինչպես ընթացավ մանակինի այս տարօրինակ, կոմպլեքսային և տպավորիչ վարքի էվոլյուցիան:

ii Չարլզ Դարվինը 1871 թվականին մանակինի մասին գրում էր. «Հատկանշական է մանակինների ձայների բազմատեսակությունը: Հետաքրքիր է, ինչ նպատակով են նրանք արտաբերում այս ձայները: Մեր կարծիքով, այս վարքը կապվում է ռեպրոդուկցիոն (վերարտադրողական)

ֆունկցիաների հետ»: Սակայն «երաժշտական հնչյուններ» արտաբերելու մեխանիզմի բացատրության համար պահանջվեց մեկ դարից ավելի: Մանակինը բնակվում է Կոլումբիայում և Էկվադորում: Ընդամենը մի քանի գիտնական է ուսումնասիրում դրա առանձնահատկությունները: Արու մանակինի գաղտնիքը բացահայտեց Կոռնելի համալսարանի օրնիթոլոգ Կիմ Բոստվիկը:

Այն հույսով, որ էգի սիրտը գրավել կարողանա, iii մանակինը շեշտակի հնչյուններ արտաբերելու համար կիրառում է փետուրը: Գիտնականները գիտեին, որ ձայներ արտաբերելու աղբյուրը թևերն էին, բայց այս գործընթացի մեխանիզմը ճիշտ չէին բացատրում-վերծանում: Խնդիրը լուծելու համար Բոստվիկը թռչնի շարժումներն այնպիսի տեսախցիկի վրա ձայնագրեց, որը վայրկյանում մշակում էր հազար կադր, ինչը ստանդարտային խցիկներից երեսուն անգամ ավելի արագ է: Դանդաղեցված տեսագրության առանձին կադրերի վերլուծությունը Բոստվիկին հանգեցրեց հայտնագործության. թռչունը թևերը միմյանց հարվածում էր վայրկյանում 107-անգամ:

Անցնել հարցերին. [15](#) [16](#) [17](#) [18](#) [19](#) [20](#)

Լաբորատորիայում մանակինի փետուրները ստուգելիս Բոստվիկը ամեն մի թևի վրա տեսավ հատուկ փետուր յոթ առանձնացված ծայրով: Հարվածելու ժամանակ ծայրերով (ատամնավոր ծայրերով) փետուրին շոշափում է փետուրներից մեկը պլեքտրումի* նման շարժումով և արտաբերում է զարմանալիորեն բարձր հաճախականության հնչյուն՝ 1500 հերց վայրկյանում: Դրա արդյունքում լսվում է ջուրակի ձայնին նման հնչյուն: Աշխարհում թռչունների 10000-ից ավելի տեսակ գոյություն ունի, սակայն ձայնը այսպես, մարմնի մասերը միմյանց քսելով, ոչ մի թռչուն չի արձակում: Այս տեսակետից հետաքրքիր է ծղրիդների ուսումնասիրությունը, որոնցից որոշ տեսակին բնութագրում է նման վարքը:

 * պլեքտրում - (նույն մեղիատոր) փոքրիկ, բարակ թիթեղիկ, որով լարային նվագարանի, օրինակ, կիթառի վրա նվագում են:

Անցնել հարցերին. [15](#) [16](#) [17](#) [18](#) [19](#) [20](#)

Ինչպես երևում է, մանակինի այս վարքի որոշիչ գործոնը ոսկորների ամրությունն է: Բոստվիկը և նրա գործընկերները մանակինի թևերը ուսումնասիրեցին համակարգչային տոմոգրաֆիայի միջոցով և հայտնաբերեցին, որ նրա թևի ոսկորները աչքի են ընկնում անսովոր պնդությամբ: Ի տարբերություն մանակինների, թռչունների մեծամասնությունը խոռոչային (խողովակավոր) ոսկորներ ունեն, ինչը թռչելիս նրանց կշիռը թեթևացնում է: Բոստվիկն ասում է, որ մանակինի ծանր ոսկորները, հավանաբար զարգացան մեծ փետուրներին հարվածող շարժումներ կատարելու համար: Բայց նա ցանկանում է հասկանալ, թե ինչպես է կարողանում ինը կամ տասը սանտիմետրանոց թռչունը այս ծանրությամբ թռչել, ինչը պահանջում է աներևակայելի էներգիա և ֆիզիկական բեռնվածություն: Թերևս, սա արդեն մանակինի այլ, մինչև այժմ էլ չբացահայտված գաղտնիք է:

15. Տեքստում ի՞նչ նշանով է կապվում մանակիների մեկ հատկությունը Մայքլ Ջեկսոնի ստեղծագործության կոնկրետ տարրի հետ:

- (ա) Փոքրիկ մանակինն իր թևերով այնպես է «երգում», ինչպես Մայքլ Ջեկսոնն էր երգում:
- (բ) Մանակինը արևադարձային անտառում այնպիսի ներկայացում է վարում, ինչպես Մայքլ Ջեկսոնն էր վարում:
- (գ) Մանակինը այնպես է «պարում» ետրնթաց սահելով, ինչպես Մայքլ Ջեկսոնը՝ երգի ժամանակ շարժվում էր, կարծես ետ-ետ էր գնում:
- (դ) Մանակինի վարքը այնպես, ինչպես Մայքլ Ջեկսոնի պարը, տարօրինակ, կոմպլեքսային և տպավորիչ էր:

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

16. Մանակինի ո՞ր վարքի վրա կենտրոնացրեց ուշադրությունը Չարլզ Դարվինը:

- (ա) Մանակինի կողմից այնպիսի ձայների արտաբերումը, որոնց նշանակությունը գիտնականների համար անձանոթ է:
- (բ) Այն զարմանալի ձայների արտաբերման վրա, որոնցով արու մանակինները փորձում են հրապուրել էգերին:
- (գ) Մանակինի կողմից «երաժշտական հնչյունների» արտաբերման վրա, որի մեխանիզմը Դարվինին հայտնի էր:
- (դ) Այն տարօրինակ մանևրների, պտույտ գործելու թե գլխիվայր կանգնելու վրա, որով մանակինը վարում է երաժշտական ներկայացումը:

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

17. Ի տարբերություն ստանդարտային խցիկների, տեսախցիկի օգնությամբ Կիմ Բոստվիկը հայտնաբերեց, որ

- (ա) մանակինի կողմից արտաբերված բազմատեսակ ձայների աղբյուրը թներն են:
- (բ) սուր հնչյուններ առաջացնելու համար մանակինը կիրառում է ասամնավոր ծայրերով փետուրը:
- (գ) մանակինը թները միմյանց է հարվածում ավելի հաճախ, քան պատկերացնում էին գիտնականները:
- (դ) մանակինը թները միմյանց հարվածում է աղմուկով, ինչը կարող է ծառայել ռեպրոդուկցիոն նպատակների համար:

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

18. Ի՞նչ գործառույթ ունի տեքստում պլեքտրումի դրվագը:

(ա) Ավելի ակնհայտ է դարձնում մանակինի կողմից թներով «երգի» մեխանիզմը:

(բ) Ընդգծում է մանակինի կողմից ծայրեր ունեցող փետուրներով արտաբերված ձայնի բարձր հաճախականությունը:

(գ) Ավելի ակնհայտ է դարձնում մանակինի տպավորիչ վարքի մեխանիզմը:

(դ) Ընդգծում է ծայր ունեցող փետուրների նշանակությունը ետրնթաց սահելու ժամանակ:

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

19. Կարդացեք տեղեկատվությունն ծղրիդի առանձնահատկությունների մասին.

I – Ծղրիդների մի տեսակը *Grillotalpa vinae* առջևի ոտքերը կիրառում է ձագարաձև բույն փորելու համար: Այնուհետև թաքնվում է բնում և արձակում է այնպիսի ձայներ, որոնք մարդը կարող է լսել անգամ 600 մետր հեռավորությամբ: 1 մետր խորությամբ փորվածքը կատարում է միկրոֆոնի գործառույթ և ձայնը 30%-ով ուժեղացնում է:

II – Ծղրիդների ձայն արձակելու «գործիքը» թևերն են. ատամնավոր ծայրերով թևը շոշափում է երկրորդ թևին և արդյունքում լսվում է ճռճոցի ձայն: Մոտավորապես նույնն է կատարվում, երբ մեր մատները քսում ենք սանրի ատամնաշարին: Արու ծղրիդի կողմից գիշերվա ճռճոցը ազդանշան է պոտենցիալ ընկերոջ համար և, միևնույն ժամանակ, նախազգուշացում է մրցակիցներին:

Ի՞նչ կապ կա այս երկու տեղեկատվությունների և մանակինի այն յուրահատկության միջև, որոնք նկարագրված են տեքստում:

- (ա) I տեղեկատվության մեջ բացատրվում է միայն ձայնի ուժեղացման մեխանիզմը, թերևս չի բացատրվում այն, որ ձայն արտաբերելու մեխանիզմը համանման լինի մանակինի «երգին», իսկ II –ում ակնհայտորեն նկարագրված է համանման գործընթացը:
- (բ) I տեղեկատվությունը ցույց է տալիս համանման գործընթացը՝ արտաբերված ձայնը լսվում է հեռվում, իսկ II-ում նկարագրված գործողությունը համանման չէ, քանզի այստեղ խոսվում է ծղրիդների կողմից մրցակիցներին նախազգուշացնելու մասին:
- (գ) Երկու տեղեկատվությունն էլ վերաբերում է մանակինի համանման գործողություն կատարելու մեխանիզմին, թերևս, I դեպքում այս գործողությունը ոտքերով է կատարվում, իսկ II դեպքում՝ ատամնավոր ծայրեր ունեցող թևերով:
- (դ) Ոչ մի տեղեկատվությունը չի առաջարկում մանակինի գործողություններին համանման պատկեր. I-ում նկարագրված է միջատների կողմից արտաբերված ձայնի ուժեղացման մեխանիզմը, իսկ II-ում անվանվում են ձայնի արտաբերման տարբեր նպատակներ:

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

20. Ո՞ր պարբերության մեջ է քննարկված մանակինի վարքի մեխանիզմը Էվոյուցիոն կտրվածքով:

- (ա) II պարբերության մեջ – այստեղ խոսվում է Դարվինի մասին, ով հիմնադրեց էվոյուցիայի տեսությունը, ստեղծեց ուսմունք տեսակների բնական ընտրության մասին:
- (բ) III պարբերության մեջ – այստեղ խոսվում է մանակինի այն վարքի վերլուծության արդյունքների մասին, որոնք ուսումնասիրել է Բոստվիկը, իսկ Բոստվիկը էվոյուցիոն տեսության հետևորդ է:
- (գ) IV պարբերության մեջ – այստեղ խոսվում է բազմատեսակության մասին, ինչը պետք է լինի բնական ընտրության արդյունք:
- (դ) V պարբերության մեջ – այստեղ խոսվում է մանակինի անսովոր պինդ և ծանր թևերի ձևավորման պատճառի մասին, ինչը տարբերում է նրան խողովակային ոսկորներ ունեցող թռչուններից:

[Վերադարձ տեքստի I էջին](#)

[Վերադարձ տեքստի II էջին](#)

Համանմանություններ

Այսպիսի առաջադրանքներում տրված է մուգ տառատեսակով առանձնացված երկու բառ (նախնական զույգ), որոնց նշանակությունների միջև գոյություն ունի որոշակի կապ: Որոշեք ինչպիսին է այս կապը:

Ենթադրական պատասխանների յուրաքանչյուր տարբերակում նույնպես տրված է նշանակությամբ փոխկապակցված բառերի զույգ: Դրանցից ընտրեք այն զույգը, որտեղ բառերի նշանակությունների միջև կապը նախնական զույգում գոյություն ունեցող կապին նման (համանման) է: Պատասխանը ընտրելիս՝ հաշվի առեք զույգերում բառերի հերթականությունը:

21. խողովակ : արյունանոթ

- (ա) կորիզ : բջիջ
- (բ) ավիշ : գեղձ
- (գ) գանգ : կիսագունդ
- (դ) առանցք : ողնաշար
- (ե) շաքիլ : սիրտ

22. համաստեղություն : աստղ

- (ա) քարքարոտ գետափ : քար
- (բ) ծառուղի : ճանապարհ
- (գ) պարտեր : յարուս
- (դ) սյունաշար : կամար
- (ե) արշիպելագ : կղզի

23. մողես : ռեզեներացիա

- (ա) ճնճղուկ : գաղթ
- (բ) ցախաքլոր : պահպանում
- (գ) թուրթակ : նմանակում
- (դ) պինգվին : ինկուբացիա
- (ե) արխեոպտերիքս : հարմարում

24. Էրբ : Էրբեմն

(ա) նվ : ոչ ոք

(բ) որտեղից : մինչև ուր

(գ) որտեղ : ամենուրեք

(դ) ինչպիսի : այսպիսի

(ե) քանի : մի քանի

25. շարժում : մնջախաղ

(ա) գույն : գեղանկարչություն

(բ) թեմա : թեմատիկա

(գ) բեմ : սցենար

(դ) ժապավեն : շերտիկ

(ե) ստեղն : ստեղնաշար

26. սողանք : տեղումներ

- (ա) Արեգակ : երաշտ
- (բ) ձյունակույտ : քամի
- (գ) երկրաշարժ : ապարներ
- (դ) տորնադո : փոշի
- (ե) հրաբուխ : խառնարան

Նախադասության լրացում

Տրված են նախադասություններ, որոնցում բաց է թողնված մի քանի բառ: Բաց թողնված բառերը նախադասության մեջ նշված են գծերով: Մեկ գիծը երբեմն համարվում է մեկ բառ, իսկ երբեմն՝ մի քանի:

Ենթադրական պատասխանների յուրաքանչյուր տարբերակը պարունակում է բառերի խումբ, որի մասերը միմյանցից բաժանված են շեղ (/) գծերով: Ընտրեք պատասխանի այն տարբերակը, որի յուրաքանչյուր մասը հերթականությամբ տեղադրելով համապատասխան բաց թողնված տեղերում կստացվի իմաստով ճիշտ նախադասություն:

27. Հեղինակն իր գիրքը կառուցում է պարադոքսների՝ արտասովոր բաների վրա: Օրինակ, գրքի գլուխներից մեկում հաստատում է այն, որ թշնամանքը ----- խաղաղությանը, ինչպես դա ողջամտությունն է համարում: ----- , նրա կարծիքով, թշնամանքը ----- գործոն, որը ----- խաղաղության պաշտպանությանը և սոցիալական միասնության պահպանությանը:

(ա) չի սպառնում / Չնայած սրան / չի հանդիսանում / խանգարում է

(բ) իրավամբ սպառնում է / Այսպիսով / հանդիսանում է / չի օժանդակում

(գ) իրավամբ սպառնում է / Հետևաբար / չի հանդիսանում / խանգարում է

(դ) չի սպառնում / Ընդհակառակն / հանդիսանում է / օժանդակում է

28. Գիտությունը սովորեցնում է, թե ----- նախորդ սերունդների խոշորագույն ուսուցիչների ----- , դա սովորեցնում է, որ պարտավոր ենք, ----- կարծիքը: Ավելին, կարող ենք ասել, որ գիտությունը այն բանի համոզմունքն է, որ ----- :

- (ա) որքան շահավետ է / անսխալական լինելու հավատը / մինչև վերջ հաշվի առնենք ցանկացած փորձագետի / ոչ մի փորձագետ անսխալական չէ
- (բ) ինչ վտանգ է պարունակում / անսխալական լինելու մեջ կասկած մտցնելը / ուշադրությամբ ստուգենք փորձագետների / բոլոր փորձագետները անսխալական են
- (գ) որքան շահավետ է / անսխալական լինելու մեջ կասկած մտցնելը / առանց պայմանի կիսենք փորձագետների / բոլոր փորձագետները անսխալական են
- (դ) ինչ վտանգ է պարունակում / անսխալական լինելու հավատը /կասկածի տակ առնելու ցանկացած փորձագետի/ ոչ մի փորձագետ անսխալական չէ

29. Սուբյեկտը և «Էկոլոգիական» աշխարհը, ----- , փոխադարձաբար լրացնողներ ----- և դրանց միմյանցից անկախ քննարկելը ----- այն ժամանակ, երբ ֆիզիկական աշխարհի գոյությունը ----- , գոյություն ունի, թե ոչ դա ըմբռնող սուբյեկտ:

- (ա) ֆիզիկական աշխարհի նման/ են / աներևակայելի է / կախված է այն բանից
- (բ) ի տարբերություն ֆիզիկական աշխարհի / են / աներևակայելի է / կախված չէ այն բանից
- (գ) ֆիզիկական աշխարհի նման / չեն/ միանգամայն հնարավոր է / կախված է այն բանից
- (դ) ի տարբերություն ֆիզիկական աշխարհի / չեն / միանգամայն հնարավոր է / կախված չէ այն բանից

30. ----- շատ ավելի տարօրինակ է, քան ցանկացած բան, ինչը ----- : Մենք ----- , ինչը անմտություն է համարվում ամենօրյա կենցաղում: Մեծ քաղաքի գլխավերևում թռչել և դրա տներում նայել եթե կարողանայինք, այնպիսի տարօրինակ գուգադիպություններ, երևույթների զարմանալի շղթաներ կհայտնաբերեինք, որ ----- , իր կանոններով և սկզբունքներով միանգամայն ----- կթվար:

- (ա) Կյանքը / մարդը կարող է հնարել / հաճախ հանդիպում ենք վեպերում այն ամենը / կենսական իրավիճակների մեծամասնությունը / անգույն և անհետաքրքիր
- (բ) Կյանքը / մարդը կարող է հնարել / ոչ էլ կհամարձակվենք պատկերացնել այն/ ամբողջ գեղարվեստական գրականությունը / անգույն և անհետաքրքիր
- (գ) Մարդու երևակայությամբ ստեղծված աշխարհը / կյանքում կարող է պատահել / ոչ էլ կհամարձակվենք վեպերում բացահայտել այն, / ամբողջ գեղարվեստական գրականությունը / անսովոր և անբացատրելի
- (դ) Մարդու երևակայությամբ ստեղծված աշխարհը / կյանքում կարող է պատահել / ոչ էլ կդժվարանանք այն ամենը պատկերացնել / կենսական իրավիճակների մեծամասնությունը / աներևակայելի և անբացատրելի

Տրամաբանություն

Այսպիսի առաջադրանքները տարբերվում են միմյանցից նախնական տվյալների և կայացրած եզրակացությունների տեսակետից: Այդ պատճառով առանձնահատուկ ուշադրություն դարձրեք հարցին, որը կցված է յուրաքանչյուր առաջադրանքին և տրված տարբերակներից ընտրեք համապատասխան պատասխանը:

Որոշ հարցի պատասխան տալը կհեշտանա , եթե տվյալները արտահայտեք գծագրի կամ դիագրամի ձևով:

31. Տրված են դրույթներ.

- Ես շատ ընկեր և շատ համադասարանցի ունեմ:
- Իմ ընկերներից ոմանք գիտեն ջուրակ նվագել:
- Իմ համադասարանցիներից ոչ մեկը չգիտի ջուրակ նվագել:

Ստորև թվարկածներից ո՞ր դրույթն է անպայմանորեն սխալ, եթե տրված դրույթները ճշմարիտ են:

- (ա) Բոլոր իմ համադասարանցիները իմ ընկերներն են:
- (բ) Բոլոր իմ ընկերները իմ համադասարանցիներն են:
- (գ) Ես ունեմ ընկերներ, որոնք իմ համադասարանցիները չեն:
- (դ) Ես ունեմ ընկերներ, որոնք իմ համադասարանցիներն են:
- (ե) Ես չունեմ ընկերներ, որոնք իմ համադասարանցիներն են:

32. Ընկերները դատողություն էին անում այն մասին, թե ինչպես անցկացնեն շաբաթ-կիրակի օրերը.

Նինո. Եթե շաբաթ օրը արշավ չկազմակերպենք, կիրակի օրը զբոսախնջույքի (պիկնիկ) այնուամենայնիվ գնանք:

Դաթո. Եթե կիրակի օրը բուլինգ խաղանք, շաբաթ օրը հարկավոր չէ պարելու գնալ:

Մակա. Եթե նախիմացությամբ շաբաթ օրը անձրև է, եկեք արշավի չգնանք և պարելու գնանք:

Զուրա. Եթե կիրակի զբոսախնջույքի (պիկնիկի) գնանք, շաբաթ օրը հարկավոր չէ պարի գնալ:

*Ստորև թվարկածներից ո՞րն է **հնարավոր**, եթե նրանցից չորսի առաջարկությունը հաշվի առնելով, անցկացրեցին շաբաթ-կիրակի օրերը:*

(ա) Շաբաթ օրը արշավ կազմակերպեցին և կիրակի օրը բուլինգ խաղացին:

(բ) Շաբաթ օրը պարելու գնացին, իսկ կիրակի օրը զբոսախնջույքի (պիկնիկի) գնացին:

(գ) Շաբաթ օրը նախիմացությամբ անձրև էր և կիրակի օրը բուլինգ խաղացին:

(դ) Շաբաթ օրը նախիմացությամբ անձրև էր և կիրակի օրը զբոսախնջույքի (պիկնիկի) գնացին:

(ե) Շաբաթ օրը արշավ չկազմակերպեցին և պարելու գնացին:





33. Փորձաքննության տեսքով, քաղաքի մի քանի փողոցների վրա, նույնանման այլ փողոցների համեմատությամբ, առավելագույն թույլատրելի արագությունը կրճատեցին 10 կմ/ժամ-ով: Եռամսյա մոնիտորինգի արդյունքները ցույց տվեցին, որ այս փողոցների վրա եռակի անգամ կրճատվեց ավտո-ճանապարհային պատահարների հաճախականությունը: Այս լրատվության հիման վրա քաղաքի քաղաքապետարանը որոշեց. **առավելագույն թույլատրելի արագությունը 10 կմ/ժամ-ով կրճատել քաղաքի բոլոր այն փողոցների վրա, որտեղ արագությունը գերազանցում էր 40 կմ/ժամ-ին:**

Ստորև թվարկածներից ո՞ր իրավիճակը կարդարացներ նշված որոշումը բոլորից ավելի:

- (ա) Փորձաքննության համար ընտրվեցին տարբեր լայնության, թերևս նույն տիպի փողոցներ, որտեղ գործում են նման շենքեր:
- (բ) Փորձաքննության ժամանակաշրջանում ընտրված փողոցների վրա կրճատվեց ավտոմեքենաների հոսքը, քանզի վարորդները ընտրում էին այլընտրական ճանապարհներ, որոնց վրա թույլատրելի առավելագույն արագությունը համեմատաբար բարձր մնաց:
- (գ) Փորձաքննությունն անց կացվեց հունիս-օգոստոս ժամանակաշրջանում, երբ փողոցներում ավտոմեքենաների քանակը առավելապես նվազ է, քան տարվա այլ ժամանակ:
- (դ) Հետազոտությունները ցույց տվեցին, որ ավտոմեքենան ցածր արագությամբ վարելիս՝ վարորդի ուշադրությունը թուլանում է, թերևս ապացուցված չէ, որ նրանք ավելի ոչհամարժեք են արձագանքում փոփոխություններին:
- (ե) Փորձաքննության համար ընտրվեցին քաղաքի տարբեր թաղամասերում գոյություն ունեցող տարբեր լայնության և տեսակի փողոցներ, որոնց վրա թույլատրելի առավելագույն արագությունը տարբեր էր:

34. Տրված է դատողություն. Այս խմբի միայն որոշ անդամ է արհեստավարժ պարող. բոլոր արհեստավարժ պարողները ֆիզիկապես ուժեղ են: Հետևաբար, այս խմբի որոշ անդամ ֆիզիկապես ուժեղ չէ:

Ստորև տրված դիագրամներից n -րդն է ցույց տալիս, որ դատողությունը ճիշտ չէ (որ եզրակացությունը չի բխում նախադրյալներից):



- (ա) Միայն I
- (բ) Միայն II
- (գ) Միայն III
- (դ) Միայն II և III
- (ե) Միայն III և IV

Ընթերցած տեքստի ըմբռնում

Ուշադրությամբ ընթերցեք և վերախմաստավորեք տեքստը: Յուրաքանչյուր հարցի ենթադրական պատասխաններից ընտրեք այն տարբերակը, որը արդարացված է տվյալ տեքստի համաձայն:

Այս կամ այն հարցին ծանոթանալուց հետո, պատասխանելու համար հնարավոր է պահանջվի կրկին տեքստին վերադառնալ, համապատասխան հատվածը կրկին ընթերցել և նորից հարցին անցնել: Դա կհեշտացնեք ինչպես տեքստի, այնպես էլ յուրաքանչյուր հարցի վերջում տրված համապատասխան նշումները «սեղմելով»:

i Հին հռոմեական ճարտարապետությունը սովորաբար վերագրում են անտիկ արվեստին: Հռոմեացիները շատ բան վերցրեցին էտրուսկներից, ովքեր, իրենց հերթին, կրեցին Հունաստանի ազդեցությունը: Հռոմի կայսրության կողմից Հունաստանը իրեն միացնելուց հետո առանձնապես ուժեղացավ այս վերջինիս ազդեցությունը հռոմեական մշակույթի, և, մասնավորապես, ճարտարապետության վրա: Հռոմեացիները հույներից վերցրեցին ճարտարապետական կոմպոզիցիայի որոշակի ոճը: Նրանց քաղաքաշինության մեջ արտացոլվեցին հունական մարզադաշտերի, թատրոնների և այլ շինությունների ձևերը, գաղափարները: Չնայած դրան, այնուամենայնիվ հռոմեական ճարտարապետությունը ոչ միայն բազմաթիվ նոր ճարտարապետական հուշարձաններ թողեց պատմությանը, այլև ստեղծեց իր առանձնահատուկ ճարտարապետական ոճը:

ii Ինչո՞վ է տարբերվում հռոմեական ճարտարապետությունը հունականից: Նախ և առաջ, արվեստի տարբեր սոցիալական և քաղաքական նպատակներով: Եթե հույները, հատկապես դասական դարաշրջանում, փոքր չափի շինություններ և **Անցնել հարցերին. 35 36 37 38 39 40**

ճարտարապետական անսամբլներ էին ստեղծում, որտեղ մարդն իրեն ազատ էր զգում, հռոմեացիները՝ աշխարհի բազմաթիվ երկրի նվաճողները, ձգտում էին դեպի հսկայական շինություններ, ինչը ընդգծում էր նրանց ինքնատիպությունը և գերիշխանությունը: Կարելի է դրանով բացատրել հռոմեական ճարտարապետական ձևերի միատեսակ ճնշող ազդեցությունը: Հույները, որոնք աչքի են ընկնում բնության նկատմամբ նուրբ վերաբերմունքով, իրենց քաղաքների նախագծման ժամանակ ի նկատի էին առնում տեղական բնական պայմանները, հռոմեացիները սակավ էին հաշվետու լինում շրջակա միջավայրի համար և համարձակորեն փոփոխում էին այն: Հռոմեական քաղաքաշինությունը կախված էր քաղաքի նպատակից և զբաղեցրած տարածքի չափից:

Հռոմեական պետության կյանքում առանձնահատուկ նշանակություն էր տրվում Հռոմին, որպես կայսրության քաղաքական և մշակութային կենտրոնի: Եթե ի նկատի առնենք ինչ քանակության խմելու ջուր էր ծախսվում և ինչ տարողության էին կրկեսները, ամֆիթատրոնները, այլ հասարակական շենքերը, պետք է ենթադրենք, որ

Հոռմի բնակչությունը հաշվվում էր մոտավորապես 1.5 միլիոն մարդ: Հոռմի բնակչության չափից ավելի հետաքրքիր բնութագրությանը հանդիպում ենք I դարի հռոմեական փիլիսոփա Լուկիոս Սենեկայի՝ մորը հասցեագրված նամակում. «Նայի՛ր մարդկանց այս զանգվածին, որին չի տեղավորում այս հսկայական քաղաքը: Երկրագնդի բոլոր անկյուններից են գալիս նրանք, նրանցից ոմանց բերեց պատվասիրությունը, ոմանց՝ ծառայողական պարտականությունը, ոմանց՝ զվարճասիրությունը, իսկ ոմանց՝ դեպի գիտություն ձգտումը: Ոմանց խրախուսում է առաջընթացի, կարիերայի ստեղծման ցանկությունը, ինչի հնարավորություն իրավամբ տալիս է այս քաղաքը»:

iv

Հոռմի դարաշրջանը ստեղծեց նաև իր համար առանձնահատուկ քաղաքի տիպ՝ քաղաք-զինվորական ճամբար (Հոռմի կայազորակայան): Մշտական և ժամանակավոր ճամբարները հռոմեական ռազմական տիրապետության հենարանային բնավայրերն էին և, որպես օրենք, կառուցվում էին պետական սահմանների մոտակայքում: Հատկանշական է, որ քաղաք-ճամբարի կոմպոզիցիան բնութագրվում էր էտրուսկյան քաղաքների

Անցնել հարցերին. [35](#) [36](#) [37](#) [38](#) [39](#) [40](#)

նմանությամբ: Թերևս, այս քաղաք-ճամբարները, որոնք մարմարից և քարից էին կառուցվում, ճշգրտորեն կրկնում էին փոխադրական վրաններից կազմված ճամբարների սխեման և համապատասխանում էին բաց երկնքի տակ զորագնդերի բնակեցման հռոմեական զինվորական օրենքներին:

Հոռմի կայսրությունը անջնջելի հետք թողեց ամենուրեք, որտեղ նրա հզոր զորագնդերը հայտնվեցին: Որոշակի իմաստով, եվրոպական քաղաքակրթությունը հատկապես պարտական է հռոմեացի շինարարներին, ովքեր բազմաթիվ նորություն մտցրեցին ինչպես հատկապես Հոռմում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Քաղաքաշինության կարևորագույն ձեռքբերում կարելի է համարել կոյուղու և ջրամատակարարման (ակվեդուկների) սարքավորումը, որոնք նպաստեցին առողջ կենսապայմանների ստեղծմանը, բնակչության և հատկապես քաղաքների աճին: Մինչև օրս կարելի է բազմաթիվ հռոմեական ակվեդուկների հետք հայտնաբերել Ֆրանսիայում, Իսպանիայում, Հունաստանում, Հյուսիսային Աֆրիկայում և Փոքր Ասիայում:

35. Ստորև թվարկածներից ո՞րն է ամենալրիվ կերպով փոխանցում առաջին պարբերության հիմնական կարծիքը:
- (ա) Հարուստ մշակույթ ունեցող երկրների ազդեցության ֆոնի վրա, հռոմեական ճարտարապետությունը պահպանեց ինքնատիպությունը և ստեղծեց իր բնօրինակ ոճը:
 - (բ) Հին հռոմեական ճարտարապետությունը վերագրում են անտիկ արվեստին, քանզի դրանում արտացոլում գտավ էտրուսկյան և հինհունական ճարտարապետական ոճը:
 - (գ) Հռոմեական ճարտարապետությունը ստեղծեց իր բնօրինակ ճարտարապետական ոճը և դրանով սահմանազատվեց այլ երկրների ազդեցությունից:
 - (դ) Չնայած իր ինքնատիպությունը պահպանելու Հռոմի փորձին, Հունաստանի միանալուց հետո հռոմեական քաղաքաշինության մեջ հունական ոճի շինությունները կարևոր տեղ են զբաղեցնում:

